



"ՀՀ Արարատի մարզ, Բարձրաշենի միջնակարգ դպրոցի շենքային պայմանների բարելավում" աշխատանքային նախագծի

Ծրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Հուլիս, 2021թ.

Պատվիրատու՝

ՀՀ Քաղաքաշինության կոմիտե

Մշակող՝

"ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ



ATMS Solutions

"ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ
Հայաստան, Երևան, 0010
Հանրապետության Հրապարակ
Վ. Սարգսյան 26/3, գրասենյակ 713 Հեռ.
+37410 583643, Բջջ. +37499 109495
info@atms.am, www.atms.am



"ՀՀ Արարատի մարզ, Բարձրաշենի միջնակարգ դպրոցի շենքային պայմանների բարելավում" աշխատանքային նախագիծ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

"ՀՀ Արարատի մարզ, Բարձրաշենի միջնակարգ դպրոցի շենքային պայմանների բարելավում"

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

"ԷՅ ԹԻ ԷՄ ԷՄ Սոլյուշնս" ՍՊԸ տնօրեն

Ա. Տեք-Թորոյան

"29" հունիսի 2021թ.



"ԷՅ ԹԻ ԷՄ ԷՄ Սոլյուշնս" ՍՊԸ

Հայաստան, Երևան, 0010

Հանրապետության Հրապարակ

Վ. Սարգսյան 26/3, 7-րդ հարկ

Գրասենյակ 713

Հեռ.՝ +37410 583643

Բջջ.՝ +37499 109495

info@atms.am

www.atms.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	4
2.	ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	4
3.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ	5
4.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԴՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ	5
5.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ	9
5.1	Նախատեսվող գործունեության հողատարածքը	11
5.2	Դպրոցի կառուցման և տեխնիկական բնութագիրը	12
5.3	Հողային աշխատանքներ	19
5.4	Աշխատանքների իրականացման ժամանակացույցը	20
5.5	Թափոնների առաջացումը	21
5.6	Վտանգավոր նյութերի և հողային զանգվածի պահումը	21
6.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	22
6.1	Նախատեսվող գործունեության տարածաշրջանի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և ռելիեֆը	22
6.2	Տարածաշրջանի երկրաբանությունը	22
6.3	Տարածաշրջանի հիդրոերկրաբանությունը	24
6.4	Սեյսմատեկտոնական պայմանները	24
6.5	Տարածաշրջանի հողերի նկարագիրը	25
6.6	Կլիման և օդերևութաբանական պայմանները	26
6.6.1	Ջերմաստիճանը	27
6.6.2	Խոնավությունը	27
6.6.3	Մթնոլորտային տեղումները	27
6.6.4	Քամի	28
6.7	Տարածաշրջանի հատուկ պահպանվող տարածքները	29
6.8	Նախատեսվող գործունեության տարածաշրջանի բուսական աշխարհը	30
6.9	Նախատեսվող գործունեության տարածաշրջանի կենդանական աշխարհը	32
6.10	Նախատեսվող գործունեության տարածաշրջանի համայնքների նկարագիրը և սոցիալ տնտեսական վիճակը	35
6.11	Պատմամշակութային և բնության հուշարձանները	37
6.12	Զգայուն կյանիչներ	38
7.	ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	38
8.	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ	39
	Հավելվածների մաս	44

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

- | | | |
|-----|--|---|
| 1.1 | Պատվիրատու՝ | ՀՀ քաղաքաշինության կոմիտե |
| 1.2 | Ձեռնարկող՝ | ՀՀ քաղաքաշինության կոմիտե |
| 1.3 | Ձեռնարկողի հասցեն՝ | ՀՀ, ք. Երևան, Հանրապետության
Հրապարակ, Կառավարական տուն 3
Հեռ. +374 11 62-17-12
Էլ. փոստ. info@minurban.am |
| 1.4 | Նախատեսվող գործունեության
վարչական տարածքը՝ | ՀՀ Արարատի մարզ, Բարձրաշեն համայնք,
Մաշտոցի 113 փ., Բարձրաշենի միջնակարգ
դպրոց (Նկար 1) |
| 1.5 | Աշխատանքային նախագծի մշակող՝ | "Հազարաշեն" ՍՊԸ
ՀՀ, Երևան, Պարույր Սևակի փող., 1 շենք,
ձախ թև, 1-ին հարկ
Հեռ. +374-60-623560, +374-91-018769
Էլ. փոստ. hazarashen@mail.ru |
| 1.6 | Նախնական գնահատման հայտի մշակող՝ | "ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ |

2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

- ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
ՍՊԸ՝ Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն
ՊՈԱԿ՝ Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՇՄԱԳ՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՕԳԳ՝ Օգտակար գործողության գործակից
ՊՎԲ՝ Պոլիվինիլբյուրիդ
ՏԵԿ՝ Տրանսֆորմատորային ենթակայան
ՊԱՄ՝ Պահուստային ավտոմատ միացում

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից կնքված նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի ֆինանսավորման շրջանակներում նախատեսվում է վերակառուցել Արարատի մարզի Բարձրաշենի միջնակարգ դպրոցը: ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվերի հիման վրա կազմվել է ճարտարապետահատակագծային առաջադրանք (Հավելված 1): Արդյունքում ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և "Հազարաշեն" ՍՊԸ-ի միջև կնքված թիվ ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/29 պայմանագրի հիման վրա մշակվել է "ՀՀ Արարատի մարզ, Բարձրաշեն միջնակարգ դպրոցի շենքային պայմանների բարելավում" աշխատանքային նախագիծը:

2014թ.-ի հունիսի 21-ին ընդունված "Ծրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն, քաղաքաշինության բնագավառում՝ 1500 մ²-ից ավելի կառուցապատման մակերեսով քաղաքաշինական օբյեկտները ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության՝ Գ կատեգորիայի նախատեսվող գործունեության տեսակների համար սահմանված ընթացակարգով:

4. ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏՐ

Ծրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության հիմնական պահանջները սահմանված են 21.06.2014 թ.-ին ընդունված "Ծրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքով: Այն կարգավորում է շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի և նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները:

"Ծրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքը

Օրենքը նկարագրում է Հայաստանում տարաբնույթ ծրագրերի և գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) և բնապահպանական փորձաքննության գործընթացները: Օրենքում օգտագործվող հիմնական սահմանումները բերված են հոդված 4-ում: Օրենքի հիմնական առարկաներն են՝

- Հիմնադրությամբ փաստաթուղթ՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փաստաթղթի (քաղաքականություն, ռազմավարություն, հայեցակարգ, ուրվագիծ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ) նախագիծ:
- Նախատեսվող գործունեությունը՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում:

Օրենքի հոդված 6-ը սահմանում է գնահատման և փորձաքննության նպատակն ու խնդիրները, իսկ հոդված 7-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացում դիտարկվող շրջակա միջավայրի

օբյեկտները և բնութագրերը: Օրենքի գլուխ 2-ը (8-13 հոդվածները) նկարագրում են ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացի հիմնական մասնակիցների լիազորությունները:

Հոդված 14-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթղթերի բնագավառները և նախատեսվող գործունեությունների տեսակները, որոնք ըստ բնագավառների դասակարգվում են Ա, Բ և Գ կատեգորիայի ըստ շրջակա միջավայրի վրա նվազող աստիճանի:

Օրենքի հոդված 16-ի համաձայն նախատեսվող գործունեությունների փորձաքննությունն իրականացվում է երկու փուլով՝ նախնական և հիմնական: Նախնական փուլում կազմվում է նախատեսվող գործունեության գնահատման նախնական հայտը, որի փորձաքննության հիման վրա (Ա կամ Բ կատեգորիայի գործունեության դեպքում) կազմվում է տեխնիկական առաջադրանք, ինչը հիմք է ծառայում ՇՄԱԳ հաշվետվության մշակման համար: Նախնական փորձաքննության տևողությունն է 30 աշխատանքային օր: Եթե փորձաքննության ընթացքում որոշվում է, որ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի, ապա ձեռնարկողին նախնական գնահատման հայտի հիման վրա տրվում է փորձաքննության եզրակացություն:

Հոդված 18-ը սահմանում է հիմնադրությային փաստաթղթի ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության և նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության բովանդակությանը ներկայացվող պահանջները: Հոդված 19-ը նկարագրում է փորձաքննության հիմնական փուլը: Սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն փորձաքննության հիմնական փուլի ժամկետները չպետք է գերազանցեն հիմնադրությային փաստաթղթի և նախատեսվող գործունեության Ա կատեգորիայի դեպքում մինչև 60 աշխատանքային օր, իսկ նախատեսվող գործունեության Բ կատեգորիայի դեպքում մինչև 40 աշխատանքային օր:

Օրենքի հոդված 26-ը սահմանում է ՇՄԱԳ և փորձաքննության ընթացքում հանրային ծանուցմանը և քննարկումների իրականացմանը ներկայացվող պահանջները: Հանրության ծանուցումը իրականացվում է մինչ լուծմանը կամ քննարկումները առնվազն 7 աշխատանքային օր առաջ զանգվածային լրատվամիջոցներով, հայտարարություններով և էլեկտրոնային փոստով: Հանրային ծանուցումը և քննարկումները իրականացվում են 19.11.2014 թ.-ի ՀՀ կառավարության "Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին" թիվ 1325-Ն որոշմամբ:

"Թափոնների մասին" ՀՀ օրենքը (2004 թ.) սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահաման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքի 3-րդ գլուխը նկարագրում է թափոնների նորմավորման, հաշվառման, անձնագրավորման ընթացակարգերը: Օրենքում ներկայացված են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները, ինչպես նաև թափոնների գործածության ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի կիրարկումն ապահովվում է բնապահպանության նախարարի հրամանով և մի շարք կառավարության որոշումներով: Մասնավորապես արտադրության և սպառման թափոնների դասակարգումը ըստ վտանգավորության դասի իրականացվում է ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թ.-ի հոկտեմբերի 26-ի "ՀՀ տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին" հրամանի համաձայն:

"Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին" ՀՀ օրենքը (2006 թ.) կարգավորում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Օրենքը դասակարգում է ՀՀ-ում հատուկ պահպանվող տարածքները. ա) ըստ նշանակության (միջազգային, հանրապետական և տեղական բնության հատուկ պահպանվող տարածքների) և բ) ըստ կատեգորիայի (պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի):

Օրենքը նկարագրում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները, պահպանության իրականացումը, օգտագործումը և վերահսկողությունը, սահմանում է պետական մարմինների իրավասությունները, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները:

"Մթնոլորտային օդի պահպանության մասին" ՀՀ օրենքը (1994թ.) կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների հարցերը: Մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների թույլտվությունների ստացման կարգը և է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները սահմանվում են ՀՀ կառավարության **"Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին"** թիվ 259, **"Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության 1999 թվականի մարտի 30-ի թիվ 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի թիվ 953-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին"** թիվ 1673-Ն և **"Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների - ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին"** թիվ 160-Ն որոշումներով:

ՀՀ Հողային օրենսգիրքը (2001 թ.) սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Համաձայն Օրենսգրքի ՀՀ հողային ֆոնդը դասակարգվում է ըստ հետևյալ կատեգորիաների. 1) գյուղատնտեսական նշանակության, 2) բնակավայրերի, 3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, 4) էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, 5) հատուկ պահպանվող տարածքների, 6) հատուկ նշանակության, 7) անտառային, 8) ջրային և 9) պահուստային հողերի:

"Բուսական աշխարհի մասին" (1999 թ.) և **"Կենդանական աշխարհի մասին"** (2000 թ.) ՀՀ օրենքները սահմանում են ՀՀ բույսերի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության ու կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցությունը կարգավորելու քաղաքականությունը: Այս օրենքների հիմնանպատակը բուսական/կենդանական աշխարհի և կենսաբազմազանության պահպանության

ապահովումն է: Այն նաև սահմանում է տեսակների՝ մասնավորապես էնդեմիկ և վտանգված, մոնիտորինգի և գնահատման ընթացակարգերը:

"ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին" թիվ 71-Ն և **"ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին"** թիվ 72-Ն ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի որոշումները սահմանում են ՀՀ բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ, անհետացած ու անհետացող, կրճատվող, ոնորոշ տեսակների կենսաբանությունը, թվաքանակը, տարածման վայրերը և ձևաբանությունը:

"ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին" ՀՀ կառավարության 31.07.2014թ. թիվ 781-Ն որոշումը սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

"Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին" թիվ 1396-Ն որոշումը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում հողի բերրի շերտի (այսուհետ՝ բերրի շերտ) նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները՝ հանումը, տեղափոխումը, պահպանումը և հաշվառումը:

"Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ.-ի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին" թիվ 1404-Ն ՀՀ կառավարության որոշումը սահմանում է հողի բերրի շերտի հանման նորմերը և հանված բերրի շերտի պահպանմանն ու արդյունավետ օգտագործմանը ներկայացվող պահանջները՝ հողային աշխատանքներ կատարելիս հողերի պահպանությունն ապահովելու, ցածր արդյունավետություն ունեցող հանդակների բերրիությունը բարձրացնելու և ռեկուլտիվացվող հողերի բերրիությունը վերականգնելու համար:

"Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին" թիվ 65-Ն որոշման մեջ ներկայացված է ՀՀ Արարատի մարզի պատմամշակութային հուշարձանների ցանկը:

"Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին" թիվ 967-Ն ՀՀ կառավարության որոշում:

"Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող ժամանակավոր սահմանափակումների և կանոնների վերաբերյալ" թիվ 253-Ն պարետի որոշում:

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՀՀ Արարատի մարզի Բարձրաշենի միջնակարգ դպրոցի շենքային պայմանների բարելավման աշխատանքային նախագիծը մշակվել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և "Հազարաշեն" ՍՊԸ-ի միջև կնքված թիվ ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/29 պայմանագրի համաձայն: Բարձրաշենի միջնակարգ դպրոցի շենքային պայմանների բարելավման աշխատանքային նախագծի կազմման համար հիմք է հանդիսացել Պատվիրատուի նախագծային առաջադրանքը: Աշխատանքային նախագծի համաձայն նախատեսվում է ապամոնտաժել գոյություն ունեցող հին մասնաշենքերը և փոխարենը կառուցել նոր մասնաշենքեր: Դպրոցի տարածքի արբանյակային քարտեզը ներկայացված է ստորև **Նկար 1**-ում, իսկ տարածքի իրադրային հատակագիծը բերված է **Հավելված 2**-ում:

Նկար 1. Նախատեսվող գործունեության վայրի տեղակայման արբանյակային քարտեզը



Նախատեսվող գործունեության տարածքը՝ Բարձրաշենի միջնակարգ դպրոցը, գտնվում է Բարձրաշեն համայնքի Մ.Մաշտոց փողոցի թիվ 113 հասցեում և տեղակայված է 0.8 հա, մեղմ թեքություն ունեցող տեղանքի վրա: Գոյություն ունեցող դպրոցը կազմված է թվով 5 մասնաշենքերից, որոնք կառուցվել են տարբեր թվականներին: Առաջին և սպորտդահլիճի մասնաշենքերը կառուցվել են 1974 թվականին, իսկ երկրորդ, երրորդ և չորրորդ մասնաշենքերը՝ 1987-1988 թվականներին: Մեյսմակայությունության տեսանկյունից դպրոցը գտնվում է ոչ բարվոք վիճակում, ինչի մասին վկայում են դպրոցի խարխուլված պատերը և դրանցում առկա մեծ ճեղքերը: Դպրոցի խարխուլ վիճակը ավելի է բարդացել հատկապես այս տարի տեղի ունեցած երկրաշարժերի պատճառով (**Նկար 2**):

Նկար 2. Բարձրաշենի միջնակարգ դպրոցի ներկայիս տեսքը և վիճակը



Դպրոցի գլխավոր մուտքը



Գլխավոր մուտքի հարևանությամբ գտնվող ուսումնական մասնաշենք



Մասնաշենքերի միմյանց կապող տաքանցում



Դպրոցի հարավային հատված բակային տարածքը



Դպրոցի արևմտյան հատվածի բակային տարածքը



Դպրոցի արևելյան հատվածի բակային տարածքը

Մասնաշենքերը հանդիսանում են առանձին կառույցներ՝ կից կառուցված կամ միմյանց հետ կապակցված տաքանցումներով: Աշխատանքային նախագծով նախատեսվում է կառուցել նոր՝ թվով 4

մասնաշենք: Դպրոցի շենքային պայմանների բարելավման աշխատանքների արդյունքում դպրոցը ունենանալու է բոլոր չափանիշներին համապատասխանող, նոր տեխնոլոգիաներով համալրված ու կահավորված մասնաշենքեր և դասարաններ:

Դպրոցը ունենալու է բարեկարգ և բոլոր չափանիշներին համապատասխանող սպորտային հրապարակ: Ներկայումս այդ հրապարակի տեղում ամայի, հողային տարածք է: Սպորտհրապարակի կառուցումից հետո աշակերտները նհարավորություն կունենան իրենց հետաքրքրության շրջանակները ընդլայնել նաև սպորտային ոլորտում, ինչը դրականորեն կազդի դպրոցի աշակերտների սպորտային կյանքի աշխուժացման, ինչպես նաև սպորտի նկատմամբ հետաքրքրություն ձևավորելու հարցում:

5.1 Նախատեսվող գործունեության հողատարածքը

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Արարատի մարզի Բարձրաշեն համայնքում, Մաշտոցի 113 հասցեում: Համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի (տես **Հավելված 5**)՝ նախատեսվող գործունեության հողամասի բնութագիրը հետևյալն է՝

- Կադաստրային ծածկագիրը՝ 03-023-0017-0012,
- Մակերեսը՝ 1.254 հա,
- Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի,
- Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման,
- Գրանցման իրավունքի տեսակը՝ սեփականության:

Աշխատանքային նախագծի համաձայն նախատեսվում է ապամոնտաժել Արարատի մարզի Բարձրաշեն համայնքում, Մաշտոցի 113 հասցեում գտնվող "Բարձրաշենի միջնակարգ դպրոց" ՊՈԱԿ-ի գոյություն ունեցող 5 մասնաշենքերը և կառուցել նոր՝ թվով 4 մասնաշենքեր: Բացի այդ, նախատեսվում է նաև դպրոցի տարածքում կառուցել՝ արևային ֆոտովոլտային կայան, սպորտհրապարակ, ավտոկայանատեղի, կանաչապատ, ասֆալտապատ և տոմետի շարվածքով տարածքներ: Դպրոցի 12540 մ² ընդհանուր հողատարածքից՝

- Կառուցապատման մակերեսը կազմում է - 2538.4 մ², այդ թվում՝
 - ❖ A մասնաշենք - 769.8 մ²,
 - ❖ B մասնաշենք - 514.5 մ²,
 - ❖ C մասնաշենք - 704.7 մ²,
 - ❖ D մասնաշենք - 549.4 մ²:
- Բարեկարգվող մակերեսը կազմում է - 9588 մ²,
 - ❖ Ավտոկայանատեղի՝ - 435.5 մ²,
 - ❖ Ասֆալտապատ տարածք - 3000 մ²,
 - ❖ Սպորտհրապարակ - 492 մ²,
 - ❖ Կանաչապատում - 1900 մ²,
 - ❖ Տոմետի շարվածքով տարածք - 2500 մ²,

- ❖ Արևային ֆոտովոլտային կայան - 1260.5 մ²:
- Գոյություն ունեցող ծառապատ մակերեսը կազմում է - 413.6 մ²:

5.2 Դպրոցի կառուցման և տեխնիկական բնութագիրը

Նախատեսվող գործունեության տարածքը՝ Բարձրաշենի միջնակարգ դպրոցը, գտնվում է Արարատի մարզի Բարձրաշեն համայնքի հյուսիս-արևելյան մասում: Աշխատանքային նախագծի համաձայն, դպրոցի գործող 5 մասնաշենքերը ապամոնտաժվելու են, փոխարենը կառուցվելու են 4 նոր A, B, C, D մասնաշենքեր, որոնց տեղադիրքերը ներկայացված են **Հավելված 3-ում**՝ կառուցվող դպրոցի գլխավոր հատակագծում:

Կոնստրուկտորական մաս

Մասնաշենք "A" - նախատեսված է լինելու տարրական դասարանի (1-4 դասարանների) աշակերտների համար: Այն լինելու է 42 մ x 16 մ առանցքային չափեր ունեցող երկհարկանի կառույց, որը ունենալու է նկուղային հարկ: Մասնաշենքը կունենա նաև երկու աստիճանավանդակներ և վերելակ, որոնցից կարող են օգտվել նաև հենաշարժողական համակարգի խախտումներ և հաշմանդամություն ունեցող անձինք: Տարրական դասարանների աշակերտների համար նախատեսված է առանձին մուտք՝ գլխավոր ճակատի կողմից, ինչպես նաև էվակուացիոն ելքեր մասնաշենքի կողային ճակատի առաջնային և նկուղային հարկերից: Առաջին հարկում են գտնվելու նախասրահը, հանդերձարանը, պահակակետը, առաջին դասարանների աշակերտների դասարանները, ննջարան-խաղասենյակը, սանհանգույցները: Երկրորդ հարկում են գտնվելու 2-4 դասարանի աշակերտների դասարանները, շախմատի սենյակը, ուսուցչանոցը, գրադարանն ու ընթերցասրահը:

Մասնաշենք "B" - հանդիսանալու է որպես դպրոցի կենտրոնական մասնաշենք և ունենալու է 18 մ x 24 մ առանցքային չափեր: Այստեղից է կազմակերպվելու միջնակարգ դպրոցի գլխավոր մուտքը: Առաջին հարկում են գտնվելու ընդարձակ նախասրահը՝ դեպի դպրոցի բակ տանող ելքով, 1-4 դասարանի աշակերտների ճաշարահը, 5-12 դասարանի աշակերտների բուֆետը՝ իրենց սպասարկող խոհանոցային և պահեստային սենյակներով: Երկրորդ հարկում են գտնվելու՝ ընդունարանը, տնօրենի և հաշվապահի սենյակները, այլ վարչական սենյակները, բժշկի սենյակը, ինչպես նաև ընդարձակ ընթերցասրահը՝ նախատեսված միջին և բարձր դասարանի աշակերտների համար: Երրորդ հարկը տրամադրվելու է հանդիսությունների դահլիճին՝ իր բեմով և օժանդակ մասերով:

Մասնաշենք "C" - ուսումնական մասնաշենքը նախատեսված է 5-12 դասարանի աշակերտների համար: Այն իրենից ներկայացնելու է 42 մ x 16 մ չափեր ունեցող եռահարկ կառույց և ունենալու է նկուղային հարկ: Մասնաշենքը կունենա երկու աստիճանավանդակներ և վերելակ: Մասնաշենքի մուտքը նախատեսվելու է կենտրոնական մասնաշենքից: Առաջին հարկում են գտնվելու հանդերձարանը, ուսիկանի սենյակը, աշխարհագրության, ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության կաբինետները՝ իրենց լաբորատորիաներով, արհեստանոցը և մասնաշենք "D" -ում գտնվող մարզադահլիճի համար նախատեսված հանդերձարանները, մարզիչի և մարզագույքի սենյակները: Մասնաշենքի երկրորդ հարկում են գտնվելու 5-8-րդ դասարանի աշակերտների դասասենյակները, գրադարանը, նախնական գինվորական պատրաստվածության սենյակը՝ իր գինապահեստով և ուսուցչանոցը: Երրորդ հարկում են գտնվելու 9-12-րդ դասարանի աշակերտների դասասենյակները, համակարգչային կաբինետը, օտար լեզուների և տեխնոլոգիայի կաբինետները: Յուրաքանչյուր

հարկում կլինեն ռեկրեացիաներ և սահնագույցներ՝ տղաների, աղջիկների, անձնակազմի և հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Մասնաշենք "D" - դպրոցի մարզադահլիճի մասնաշենքն է, որի մուտքը կազմակերպվելու է մասնաշենք "C" -ից: Մասնաշենքը կառուցվելու է 16.4 մ x 30 մ առանցքային չափերով և ունենալու է մեկ հարկ: Տանիքը լինելու է երկթեք, լանջավոր մետաղական ֆերմաների վրա իրականացված սենդվիչ տիպի ծածկի սալերով, ալիքաձև փոշեներկված ցինկապատ թիթեղով: Մասնաշենքը կունենա կազմակերպված ջրահեռացման համակարգ:

Աշխատանքային նախագծով նախատեսված մասնաշենքերը հանդիսանում են առանձին կառույցներ և բաժանվում են միմյանցից հակասեյսմիկ կարաններով՝ ապահովելով ֆունկցիոնալ կապը բոլոր հարկերի մակարդակներով: Կենտրոնական և ուսումնական մասնաշենքերը նախատեսվում է իրականացնել երկաթբետոնե հիմնակմախքով, շրջանակակապային համակարգով: Ուսումնական մասնաշենքերի լայնական ուղղությամբ շրջանակները եռաթիչք են՝ 6.4 մ, 3.2 մ, 6.4 մ թիչքներով, իսկ երկայնական ուղղությամբ շրջանակները բազմաթիչք են՝ 6 մ թիչքներով, կենտրոնական մասնաշենքի շրջանակների թիչքները երկայնական և լայնական ուղղություններով 6.4 մ է: Հիմքերը նախատեսված են հոծ միաձույլ երկաթբետոնե սալի և հիմնային հեծանների համատեղմամբ:

Երկաթբետոնե հիմնակմախքը իրականացված է միաձույլ երկաթբետոնե սյուների և հեծանների համակարգով: Կոշտության դիֆագրամներն իրականացվել են 20 սմ հաստությամբ երկաթբետոնով: Միջհարկային ծածկերն ու վերնածածկերը իրականացված են միաձույլ երկաթբետոնե սալերով: Պարփակող պատերը և միջնորմները նախատեսված է իրականացնել պեմզաբլոկե ամրանավորված շարվածքով: Նախատեսվում է շենքերի արտաքին պատերի ջերմամեկուսացում հանքաբամբակե կոշտ սալերով և երեսպատում քարե սալերով:

Մասնաշենքերի տանիքները լինելու են լանջավոր՝ իրականացված մետաղական կոնստրուկցիաներով, կազմակերպված արտաքին ջրահեռացումով:

Մարզադահլիճի կոնստրուկտիվ լուծումը տրված է երկաթբետոնե հիմնակմախքով, շրջանակային համակարգով: Լայնական ուղղությամբ շրջանակները միաթիչք են՝ 16.4 մ թիչքով, իսկ երկայնական ուղղությամբ տեղադրված են 3 մ քայլով: Հիմքերը կետային են, իրականացված միաձույլ երկաթբետոնով, սյուներն ունեն 40 x 80 սմ չափերի լայնական հատույթ: Մարզադահլիճի սյուները լայնական ուղղությամբ կապված են միմյանց հետ 16.4 մ թիչքով մետաղական ֆերմաներով, որոնք սեղանաձև են, երկաթե լանջերով: Պարփակող պատերը իրականացված են պեմզաբլոկե ամրանավորված շարվածքով:

Դպրոցը նախատեսված է 288 աշակերտի համար: Դասասենյակների ընդհանուր քանակը 12-ն է, նախատեսված 24 աշակերտի համար: Մասնաշենքերի մուտքերը ապահովված են աստիճաններով և թեքահարթակներով: Մասնաշենքերի շուրջ իրականացված է ասֆալտբետոնե սալվածք, տարածքը բարեկարգվելու և պարսպապատվելու է, ինչպես նաև իրականացվելու է արտաքին լուսավորություն:

Ինժեներական մաս

Արևային ջրատաքացուցիչ

Նախագծով նախատեսվում է պարզ, ոչ ճնշումային արևային ջրատաքացուցիչի (թերմոսիֆոն) տեղակայում դպրոցի "B" բլոկի տանիքին՝ լրացուցիչ հենակառուցվածքի օգնությամբ, որը միացվելու է առաջին հարկի խողանոցում գտնվող սպասքի լվացման տաք ջրամատակարարման ցանցին:

Ջրատաքացուցիչը կազմված է հետևյալ հիմնական բաղադրիչներից՝

- ջերմընդունիչ հատուկ շերտ ունեցող վակուումային անոթ (կոլբա)՝ 36 հատ,
- ջերմամեկուսացված տարա (թերմոս),
- հենակառուցվածք,
- հսկման և ղեկավարման վահանակ (ներառյալ ջերմաստիճանի և ջրի քանակի տվիչը),
- էլեկտրամագնիսական փական,
- էլեկտրական տաքացուցիչ,
- մագնեզիումի ձող:

Ջրատաքացուցիչի ընդհանուր տարողությունը (ներառյալ վակուումային անոթները) 360 լ է: Ջրատաքացուցիչի լրակազմի մեջ մտնող էներգախնայող էլեկտրական տաքացուցիչը նախատեսված է անարև օրերին ջուրն անհրաժեշտ ջերմաստիճանի հասցնելու համար: Ջրատաքացուցիչի շինությունից դուրս, այդ թվում նաև տանիքի ներսում գտնվող խողովակները փաթաթվում են հատուկ ջերմամեկուսիչ նյութով՝ ջերմային կորուստը նվազեցնելու նպատակով: Վերոնշված հատվածում, խողովակներին զուգահեռ անցկացվելու է ինքնակարգավորվող տաքացվող մալուխ: Վերջինս միացվելու է ղեկավարման վահանակից (ոչ ավտոմատ), երբ շրջակա միջավայրի ջերմաստիճանը ցածր լինի -5°C -ից: Արևային ջրատաքացուցիչի տեխնիկական բնութագիրը ներկայացված է ստորև **Աղյուսակ 1**-ում:

Աղյուսակ 1. Արևային ջրատաքացուցիչի տեխնիկական բնութագիրը

Տեսակը	Թերմոսիֆոն, ոչ ճնշումային		
Ջերմային փոխանակիչի ձև	Վակուումային կոլբաներ, պարզ		
Վակուումային կոլբաների քանակը	36 հատ		
Ընդհանուր տարողություն (ներառյալ կոլբաները)	360 լ		
Ներքին բաք	Զժանգոտող պողպատ, SS304-2B / SS316L		
Արտաքին բաք	Ցինկապատ պողպատ, PVDF		
Մեկուսացման շերտ	Պոլիուրեթանային փրփուր, ≥ 41 կգ/մ ³ խտություն		
Հենակառուցվածք	Ցինկապատ պողպատե ծածկույթով		
Արևային ջերմաէներգետիկ հզորություն	2.88 կՎտ		
Վակուումային կոլբաների տեխնոլոգիական բնութագիր	Նյութ	Բորոսիլիկատային ապակի 3.3	
	Կանիչ շերտ	ALN/AIN – SS/CU ծածկույթ	
	ՕԳԳ	95%	
	Տրամագիծ	Ø 58 մմ	
		Երկարություն	1800 մմ

Օժանդակ էլեկտրական տաքացուցիչ	Առկա է Տեսակ՝ թերմոստատ Հզորություն՝ 2.5 կՎտ Նյութ՝ պղնձե համաձուլվածք Միացման տրամագիծ՝ 1.25" Ջերմաստիճանի տիրույթ՝ 30-85 °C
Օժանդակ բաք	Առկա է Տարողություն՝ 5 լ Միացման տրամագիծ՝ 3/4 Նյութ և գույն՝ հիմնական բաքի նույնությամբ
Մագնեզիումի ձող	Չափեր՝ Ø 20x 230 մմ
Չափեր	3.05 x 1.79 x 1.75 մ
Չանգված	140 կգ
Շահագործման գործարանային ժամկետ	20 տարի

Արևային ֆոտովոլտային համակարգի օղակոխություն

Նախագծով նախատեսվում է 65.8 կՎտ պիկային դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում դպրոցի տարածքում: Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է 7 հատ ՄԲՖՎՎԽ-ներից (միաբյուրեղային ֆոտովոլտային վահանակային խմբավորում), որոնք իրենց հերթին կազմված են 20 հատ միաբյուրեղային 470 Վտ, 156 (78x2) կետքիչներով, պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից: ՄԲՖՎՎԽ-ները 3x2+1 խմբավորմամբ միացված են 60 կՎտ անվանական ելքային հզորությամբ եռաֆազ ներգանցային 6 կերպափոխիչներից 4-ին: ՖՎ վահանակները տեղակայվելու են դեպի հարավ ուղղված և հորիզոնի նկատմամբ 30° անկյուն ունեցող հողային հենակառուցվածքի վրա՝ ձգման միջոցով: Ֆոտովոլտային համակարգի վահանակների տեղադրման անկյունից կախված, գետնի մակարդակից դրանց բարձրությունը կարող է տատանվել 0.5-2.5 մ միջակայքում: Արևային ֆոտովոլտային կայանի ՖՎ կրող հենակառուցվածքի բոլոր դետալները և տրամատներն էլեկտրոլիզացված ալյումինից են: Հենակառուցվածքը ձգվում է նախորոք այդ նպատակով կառուցված երկաթբետոնե հիմքերի վրա:

Կերպափոխիչը փոփոխական հոսանքի կողմից կարճ միացումներից և իմպուլսային գերլարումներից պաշտպանելու համար փոփոխական հոսանքի համակցման տուփի (ՓՀՀՏ) մեջ տեղադրվելու է ինքնավար անջատիչ և իմպուլսային գերլարման սահմանափակիչ: ՖՎ համակարգը բաշխիչ էլեկտրական ցանցին միանում է ՓՀՀՏ-ն մալուխով շենքի մուտքային բաշխիչ վահանին էլեկտրականապես միանալու միջոցով:

Օղակոխությունը կազմակերպվելու է ըստ ՀՀ-ում գործող նորմերի: Բոլոր սարքերը տեղադրվելու են տանիքում՝ բացառությամբ դահլիճի պահեստների և C մասնաշենքի հանդերձարանների սարքերից՝ ըստ նպատակահարմարության: Օղակոխման համակարգի տաքացումը նախատեսված է իրականացնել էլեկտրական եղանակով, քանի որ դպրոցը ունի արեւային էլեկտրական կայանքներ:

Հաշվի առնելով դպրոցի էլեկտրաէներգիայի ծախսը, հետագայում ջեռուցման համար օգտագործվող տաք ջրի քանակը և դպրոցի բարենպաստ տեղադիրքը՝ արևային ֆոտովոլտային համակարգի տեղադրումը հնարավորություն կտա բավականաչափ կրճատել էլեկտրաէներգիայի և գազի ծախսը՝ միևնույն ժամանակ նվազեցնելով CO₂ գազի արտանետումները:

Արտաքին և ներքին էլեկտրամատակարարում

Նախագծով նախատեսվում է դպրոցի մարզումների ու հանդիսությունների դահլիճների և ուսումնական մասնաշենքերի ներքին լուսավորության և էլեկտրամատակարարման ցանցերի իրականացում, ինչպես նաև վերելակների և օդափոխության համակարգերի էլեկտրասնուցման ապահովում: Ուժային մալուխների անցկացման համար նախատեսված է A և C մասնաշենքերի նկուղային հարկում ու B մասնաշենքի առաջին հարկում տեղակայել մալուխատար:

A մասնաշենքի նկուղային հարկում տեղադրվում է ՊԱՄ, որին միանում են մուտքային մալուխները: ՊԱՄ-ից սնվում է A մասնաշենքի առաջին հարկի վահանային սենյակում տեղադրվող մուտքային բաշխիչ վահանը: Դպրոցի ուսումնական մասնաշենքերի ամբողջ տարածքում արհեստական (էլեկտրական) լուսավորությունն ապահովվելու է լուսադիոդային (LED) լուսատուների և լուսարձակների միջոցով: Դասասենյակներում լուսատուների խմբավորումն իրականացվելու է ըստ շարքերի՝ ապահովելով պատուհանից առավել հեռու շարքի առաջին հերթի միացում: Դասասենյակներում՝ գրատախտակի վերնամասում, պատի վրա, լրակազմի մեջ ներառված բարձակների միջոցով տեղադրվում են տեղային լուսավորության լուսատուներ: Մարզադահլիճում նախատեսվում են հարվածադիմացկուն և պաշտպանիչ ցանցով լուսարձակներ: Ներքին լուսավորության ցանցի լարանցումն իրականացվելու է ՍԻԲԲԻ 2x1.5 մմ² տիպի, մակնիշի և կտրվածքների պղնձե բազմաշիղ հաղորդալարով:

Բոլոր վարդակները նախատեսվում է իրականացնել 16 Ա անվանական հոսանքով, որոնք ունենալու են պաշտպանական սարքվածք, ինչը ինքնավար կերպով փակելու է խրոցակային վարդակի բնիկը՝ հանված խրոցակի դեպքում: Մնուցման առանձին խմբեր են նախատեսված իրականացնել հրդեհի ինքնավար ազդարարման ու պահնորդական ազդարարման համակարգի և տեսաձայնագրման համակարգի համար: Հոսանքի արտահոսքից պաշտպանող և առանձին սնման խմբեր են նախատեսված նաև կուտակային էլեկտրաջրատաքացուցիչների համար: Դիֆերենցիալ հոսանքի ինքնավար անջատիչների կեղծ գործարկումները բացառելու նպատակով պարտադիր կատարվելու են պոտենցիալների հավասարեցում: Ներքին էլեկտրամատակարարման ցանցի լարանցումն իրականացվելու է ՍԻԲԲԻ 3x2.5 մմ² տիպի, մակնիշի և կտրվածքի հաղորդալարերով:

Ներքին լուսավորության և էլեկտրամատակարարման ցանցերի լարանցումն իրականացվելու է փակ՝ սավաղի տակ, բացառությամբ կախովի առաստաղների տակ անցկացվող լարանցումից, որոնք անց են կացվելու պոլիէթիլենային (ցածր ճնշման) ծալքախողովակով:

Սարքավորումները հատակի նիշից տեղադրվելու են հետևյալ բարձրությունների վրա՝

- Անջատիչ / աշխատասենյակներ 900 մմ,
- Անջատիչ / մնացած 1800 մմ,
- Վարդակ 200 մմ:

Բոլոր էլ. սարքավորումների մետաղական կորպուսները, մետաղական մալուխատորերը հողանցվելու են: Ներքին էլեկտրամատակարարման, օդափոխության համակարգերի և վերելակների սնուցումը իրականացվելու է երեք լարով՝ ներառյալ PE լարը:

Նախագծով նախատեսվում է ուսումնական մասնաշենքերի տարիանման և վթարային լուսավորության ցանցի իրականացում: Գլխավոր և պահեստային տարիանման ելքերի ուղղությունները ցույց տալու և տարիանման ուղիները լուսավորելու համար նախատեսված է տարիանման և վթարային համատեղ լուսավորության ցանց: Տարիանման համար օգտագործվելու են նորմերի համապատասխան չափեր և նշումներ ունեցող լուսատու-ցուցանակներ: Տարիանման և վթարային լուսատուները լուսադիողային են, ունեն ներկառուցված կուտակային մարտկոցներ: Տարիանման լուսատուները միշտ միացված են լինելու, իսկ վթարային լուսատուները ինքնավար կերպով միանալու են էլեկտրամատակարարման ըդհանուր ցանցի բացակայության դեպքում:

Աշխատանքային նախագծով նախատեսվում է նաև դպրոցի տարածքի, բացօդյա խաղահրապարակի, անցուղիների արհեստական (էլեկտրական) լուսավորության իրականացում: Ընտրվել են S-1 և S-2 տիպի արտաքին լուսավորության հենասյուներ: Հենասյուները կազմված են հետևյալ հիմնական բաղադրիչներից՝

- կանգնակ՝ Ø102x4 մմ պողպատյա խողովակ, L=7 մ,
- լուսատուի բարձակ՝ Ø40x3 մմ պողպատյա խողովակ, L=1.8 մ:

Կանգնակները տեղադրվելու են բնահողի մեկ մետր խորությամբ փոսորակի մեջ և ամրացվելու են Բ15 մակնիշի բետոնով: Կանգնակների վրա՝ հողի նիշից 0,5 մ բարձրությամբ, տեղադրվելու են մետաղական բաժանարար տուփեր: Որպես լուսատու ընտրված է 100 Վտ հզորությամբ արտաքին լուսավորության լուսադիողային լուսատու: Արտաքին լուսավորության ցանցի կառավարումն իրականացվելու է ապարատաձրագրային համակարգի միջոցով: Այդ նպատակով տեղադրվելու է ծրագրավորվող տրամաբանական հսկիչ (ՄՏՀ), որն ունի տարվա կտրվածքով թույնի կարգավորմամբ ծրագրավորման հնարավորություն: Ընդացիկ ստուգումների և վերանորոգումների համար սխեմայում ՄՏՀ-ից առաջ տեղադրվելու է փոխանջատիչ, որը հնարավորություն է տալիս կոնակային սեղմակների միջոցով դեկավարել արտաքին լուսավորության աշխատանքը: Լուսատուների էլեկտրասնուցումը կատարվելու է BBΓHГ 4x4 մմ2 տիպի և կտրվածքի մալուխով, որը շենքից դուրս հատվածում անցկացվելու է ստորգետնյա ПНД Ø32/25 մմ տիպի և տրամագծի պոլիէթիլենային ծալքախողովակով: Դպրոցի շենքի հարակից տարածքում նախատեսվում է կառուցել հողանցման կոնտուր, որն իրականացվելու է հողի շերտից 0.5 մ խորությամբ անցկացված 40x4մմ շերտապողպատով և 2.5 մ երկարությամբ 50x50x5 մմ պողպատե անկյունակներով: Շերտապողպատը անկյունակներին միանում է եռակցումով և մտնելով շենք՝ միանալու է վահանային սենյակի մուտքային բաշխիչ սարքավորմանը:

Ջրամատակարարում և ջրահեռացում

Դպրոցը ունի գործող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր, որոնք աշխատանքային նախագծով փոփոխության չեն ենթարկվելու: Խմելու ջուրը դպրոց է մատակարարվում Գառնիից և սպասարկվում է "Վեոլիա ջուր" ընկերության կողմից: Ջրամատակարարման ռեժիմը շուրջօրյա է:

Դպրոցը ունի գործող կոյուղատար (ներառյալ անձրևաջրերի) համակարգ, որը օգտագործվելու է թե շինարարության և թե դպրոցի հետագա շահագործման ընթացքում՝ առաջացող կեղտաջրերի/հոսքաջրերի հեռացման նպատակով:

Ազդարարման և տեսահսկման համակարգեր

Աշխատանքային նախագծի համաձայն նախատեսվում է դպրոցի նոր կառուցվող մասնաշենքերում պահնորդային և հրդեհային ազդարարման համակարգերի տեղադրում: Հակահրդեհային համակարգի ինքնավար ազդասարքերը նախատեսված են հսկվող շինությունում հրդեհի հայտնաբերման և անձնակազմին ու համապատասխան ծառայություններին տեղեկացնելու համար: Նախատեսվում է տեղադրել ծխի և ջերմային (կոմբինացված) ինքնավար, մագնիսակոնտակտային, շարժման, կրակի, բոցի, ինչպես նաև ձեռքի հրդեհային ազդասարքեր: Վերջինների տեսակն ու քանակն ընտրված են ըստ մակերեսի, շինության նշանակության և հրդեհավտանգության աստիճանի: Ծխի հայտնաբերման ինքնավար ազդասարքերը տեղադրվելու են պաշտպանվող շինության առաստաղին՝ ընդ որում այնպես, որ գտնվեն հեռու՝ լուսատուներից 0.5 մ, օդանցքներից 1 մ, իսկ առավելագույն հեռավորությունը պատերից՝ 4.5 մ, միմյանցից՝ 9 մ (տեղանքի առանձնահատկություններից կախված կարող են լինել բացառություններ): Վերելակների մեջ նախատեսված է տեղադրել 2-ական ծխի հայտնաբերման ինքնավար սարք, որոնց համար անցկացվող մալուխները շարժվելու են վերելակների հետ, ամբողջ երկայնքով: Համակարգչային սենյակում նախատեսվում է տեղադրել ծխի հայտնաբերման ինքնավար սարքեր նաև իրական և կեղծ առաստաղների միջև՝ համեմատաբար շատ մալուխների առկայության համար: Ձեռքով գործարկման ազդասարքերը տեղադրվում են պատերին՝ հատակից 1.5 մ բարձրության վրա: Չինանոցում և հաշվապահության աշխատասենյակում տեղադրվելու են պահնորդային ինքնավար ազդարարման՝ շարժումը և ձայնը հայտնաբերող, ապակու կոտրվելը և դռան բացման էլեկտրամագնիսական ազդասարքեր: Անձնակազմի տեղեկացման համար միջանցքներում, հանդիսությունների և մարզումների դահլիճներում տեղադրվում են ներքին ձայնային ազդարարման սարքեր (շակ), իսկ գլխավոր մուտքի մոտ՝ լուսաձայնային ազդարարման արտաքին սարք: Ազդարարման ձայնային սարքերը չեն տեղադրվելու լուսատուներին, ապակիներին և այնպիսի տարրերին մոտ, որոնք ձայնի կամ վիբրացիայի ազդեցությամբ կարող են ենթարկվել ռեզոնանսի: Դրանք տեղադրվելու են այնպես, որ վերջիններիս վերին մասերը հատակի մակարդակից լինեն 2.3 մ բարձրության վրա, միևնույն ժամանակ սարքի և առաստաղի միջև պահպանվելու է 150 մմ հեռավորությունը: Ազդանշանների ստացման, վերլուծման, հասցեավորման, ինչպես նաև GSM կապի միջոցով համապատասխան մարմիններին տեղեկացնելու համար առաջին հարկում (պահակի սենյակ) տեղադրվելու է 8 տեղանոց ընդունիչ-հսկիչ պանել՝ GSM կապի մոդուլով: Արտաքին էլեկտրամատակարարման ընդհատման դեպքում՝ համակարգի անխափան աշխատանքի համար, նախատեսված է 3 հատ անընդհատ սնուցման բոկներ (ակումյատորային մարտկոց): Ազդասարքերի և շակների սնուցումն իրականացվելու է հսկիչ պանելից՝ կրակ չտարածող և սակավածուխ մեկուսացումով պղնձե մալուխների միջոցով, համապատասխանաբար՝ FRLS 2x2x0.22 մմ² և FRLS 2x0.5 մմ² տիպի և կտրվածքով: Մալուխներն անց են կացվում փակ՝ սավաղի տակ՝ Ø9.8 մմ պլաստմասսե ծալքախողովակի միջով:

Հակահրդեհային համակարգի ազդարարման հետ մեկտեղ դպրոցը շինարարական աշխատանքների ավարտից հետո ունենալու է հրդեհաշիջման համար նախատեսված արտաքին հրդեհային ծորակներ և ներքին հիդրանտներ: Ջրի հոսքը ապահովվելու է գործող ջրամատակարարման համակարգից: Դպրոցը համարված է լինելու նաև կրակմարիչներով:

Նախագծով նախատեսվում է դպրոցի միջանցքների, ռեկրեացիոն սենքերի, աստիճանավանդակների, հանդիսությունների ու մարզումների դահլիճների, գլխավոր ու օժանդակ մուտքերի, ինչպես նաև արևային կայանի տեսահսկում և տեսաձայնագրում: Այդ նպատակով տնօրենի սենյակում

տեղադրվելու են տեսաձայնագրման և տեսահսկման սարքավորումներ: Նախատեսված է տեղադրել գունավոր և բարձր որակի (HD) նկարահանող թվային տեսախցիկներ: Վերջինները նախատեսված են նաև գիշերային ռեժիմի համար: A և D մասնաշենքերի անկյունային մասերում տեղադրվելու են 3 տեսախցիկ (մոտավոր 6 մ բարձրության վրա)՝ արևային կայանը տեսահսկելու համար: Տեսախցիկներից ինֆորմացիան ընդունվում, տեսաձայնագրվում և մոնիտորներին ցուցադրվում է ցանցային տեսաձայնագրիչների միջոցով: Իրական ժամանակում հսկողության համար տնօրենի սենյակում նախատեսված է մոնիտոր, իսկ պահակի սենյակում նախատեսված է մինի համակարգիչ:

Աշխատանքային նախագծով նախատեսվում է նաև մասնաշենքերի էլեկտրոնային ժամացույցների և ծանուցումների համակարգի իրականացում: Ընդ որում ծանուցումների համակարգը բաղկացած է լինելու 2՝ տեխնիկական և ծրագրային մասից՝

- էլեկտրոնային զանգի համակարգ՝ համաժամանակեցվում է էլեկտրոնային ժամացույցների հետ,
- ռադիոհանգույցային ծանուցումների համակարգ:

Աշխատանքային նախագծով նախատեսվում է նաև ինտերնետի և հեռախոսային ցանցերի իրականացում: Ինտերնետի ապահովման համար նախատեսվում է տեղադրել ներքին RJ45 վարդակներ, իսկ հեռախոսային ցանցի համար RJ11 վարդակներ՝ համապատասխան սենյակներում: Ըստ անհրաժեշտության տեղադրվելու են ցանցային կոմուտատորներ և WiFi սարքեր միջանցքներում և մի քանի սենյակներում: Համակարգչային սենյակում նախատեսվում է տեղադրել 16 մուտքանի ցանցային փոխարկիչ, որը կապահովի ինտերնետային ցանց բոլոր համակարգիչների համար:

Նախատեսվող գործունեության իրականացման համար կիրառվող շինարարական կոնստրուկցիաների և նյութերի անվանացանկը, ինչպես նաև դրանց քանակությունները բերված են **Հավելված 4-ում**:

Կապալառու կազմակերպությունը նախատեսվող գործունեության տարածքի հարևանությամբ վարձվելու է սեփական տուն, որը հանդիսանալու է կառուցման աշխատանքների ժամանակահատվածում կազմակերպության գրասենյակը, ինչպես նաև ծառայելու է կառուցման աշխատանքներում ներգրավված անձանց սանիտարահիգիենիկ կարիքները (լոգարան, զուգարան, սննդի ընդունման և հանգստի սենյակներ) հոգալու համար: Բոլոր աշխատողների համար նախատեսված է լինելու ընդմիջում, որի ընթացքում նրանք ապահովվելու են ճաշով և անհրաժեշտ հանգստաժամանակով:

5.3 Հողային աշխատանքներ

Դպրոցի վերակառուցման աշխատանքների արդյունքում իրականացվելու են հողային աշխատանքներ: Ընդհանուր առմամբ փորվելու է 991.056 մ³ ծավալով հող, որից 938.2 մ³ ծավալով հողը օգտագործվելու է հետլցման աշխատանքների իրականացման համար, իսկ 52.856 մ³ ծավալով հողը տեղափոխվելու է քաղաքային աղբավայր: Հետլցման համար օգտագործվող հողից (938.2 մ³) 109.8 մ³ ծավալով հողը բուսահող է, որը օգտագործվելու է տեղում՝ տարածքի բարեկարգման, ծառերի տնկման, ծառերի արմատների ամրացման, տարածքի հարթեցման աշխատանքների համար:

Բուսահողը պահվելու է առանձին հողաթմբերով: Ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու նպատակով հողաթմբերը ծածկվելու են անջրաթափանց բրեզենտե ծածկույթով:

Բուսահողի հանումը, պահումը և հետագա օգտագործումը իրականացվելու է ապահովելով ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի "Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ.-ի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին" թիվ 1404-Ն, ինչպես նաև ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի "Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին" թիվ 1396-Ն որոշումների համաձայն:

Դպրոցի տարածքը ծառաշատ չէ: Ընդհանուր հաշվով դպրոցի տարածքում կա մոտ 9 ծառ, որից 5-ը հատման ենթակա չեն, իսկ 4-ը հատվելու են: Դպրոցի տարածքում կան մոտ 42 հատ թփուտներ, որոնք ոչ դեկորատիվ, ոչ պտղատու, փշոտ և մացառուտային թփեր են և տարածքում աճել են անկախ մարդկային ներգործությունից: Դրանք հանվելու են դպրոցի տարածքից, փոխարենը տարածքում տնկվելու են տարածքին բնորոշ նոր տնկիներ, իսկ այն տարածքներում որտեղ ծառատունկ չի կատարվելու, ցանվելու է սիզախոտ: Դպրոցը մինչ օրս գործում է և ապահովված է ոռոգման ջրով: Հաշվի առնելով այն, որ դպրոցի տարածքում լինելու են ծառեր և սիզախոտեր՝ դրանց ոռոգումը իրականացվելու է շարժական ցնցուղային ոռոգման համակարգով, ինչը թույլ կտա ավելի հեշտ և արդյունավետ կառավարել ոռոգման համակարգը: Ծառերի և սիզախոտերի կաչողականության չապահովման դեպքում դրանք կփոխարինվեն նորերով:

5.4 Աշխատանքների իրականացման ժամանակացույցը

Բարձրաշենի միջնակարգ դպրոցի ապամոնտաժման և կառուցման աշխատանքների ընդհանուր տևողությունը 24 ամիս է, որից՝

- Նախապատրաստական աշխատանքների տևողությունը - 1 ամիս,
- Ապամոնտաժման աշխատանքների տևողությունը - 6 ամիս,
- Կառուցման աշխատանքների տևողությունը - 17 ամիս:

Ապամոնտաժման և կառուցման աշխատանքները նախատեսվում է իրականացնել 4 փուլերով (չհաշված նախապատրաստական աշխատանքների առաջին ամիսը)՝

- 1-ին փուլ - նախատեսվում է քանդել-ապամոնտաժել դպրոցի գոյություն ունեցող մասնաշենքերից 2-ը՝ ապամոնտաժման տևողությունը 2.5 ամիս,
- 2-րդ փուլ - նախատեսվում է կառուցել դպրոցի նոր 2 մասնաշենք՝ կառուցման տևողությունը 8.5 ամիս,
- 3-րդ փուլ - նախատեսվում է ապամոնտաժել դպրոցի գոյություն ունեցող մնացած 3 մասնաշենքերը՝ ապամոնտաժման տևողությունը 3.5 ամիս,
- 4-րդ փուլ - նախատեսվում է կառուցել դպրոցի նոր 2 մասնաշենք՝ կառուցման տևողությունը 8.5 ամիս:

5.5 Թափոնների առաջացումը

Դպրոցի ապամոնտաժման և կառուցման աշխատանքների ընթացքում կառաջանան հետևյալ տեսակի և ծավալի թափոններ՝

- Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ (ծածկագիր 91200601 01 00 4) - մինչև 5000 տ,
- Չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ (այդ թվում թուջի և/կամ պողպատի փոշի), (ծածկագիր 35131100 01 00 4) - մինչև 2.5 տ,
- Օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար (ծածկագիր 35310305 01 01 3) - մինչև 0.5 տ,
- Չտեսակավորված այլումին պարունակող թափոններ (այդ թվում այլումինի փոշի), (ծածկագիր 35310111 01 00 4) - մինչև 0.3 տ,
- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)՝ (ծածկագիր 91200400 01 00 4) - 2.3 տ:

Որպես երկրորդային հումք օգտագործվող թափոնները, մասնավորապես՝ սև և գունավոր մետաղների ջարդոնը, կփոխանցվեն համապատասխան լիցենզավորված կազմակերպությունների, իսկ շինարարական և կենցաղային աղբը կփոխադրվի Նուբարաշենի քաղաքային աղբավայր:

Դպրոցի շինարարության փուլում՝ ապամոնտաժման աշխատանքների արդյունքում առաջացած կոնստրուկցիաները, իրերը և շինարարական աղբը ժամանակավոր կուտակվելու են շին. հրապարակում հատուկ հատկացված ազատ տարածքում, որտեղ մնալու են առավելագույնը 10 օր՝ անջրաթափանց թաղանթով ծածկված և պարբերաբար տեղափոխվելու են աղբավայր: Դպրոցի շահագործման փուլում առաջացող կենցաղային աղբը նույնպես պարբերաբար հեռացվելու է տարածքից՝ Բարձրաշեն համայնքի աղբահանող կազմակերպության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Դպրոցի շինարարության, ինչպես նաև շահագործման փուլերում տարածքում տեղադրվելու են աղբամաններ:

5.6 Վտանգավոր նյութերի և հողային զանգվածի պահումը

Շինարարության ընթացքում օգտագործվող շինանյութը մինչ օգտագործումը պահվելու է ծածկված բրեզենտով կամ ՊՎԶ թաղանթով: Բետոնե խառնուրդը պատրաստի վիճակում բերվելու է նախատեսվող գործունեության վայր, ինչը կնվազեցնի շինարարության ընթացքում փոշու առաջացումը:

Շինարարական տեխնիկայի լիցքավորումը իրականացվելու է մոտակա բենզա-, դիզվառելիքա- լցակայանից, իսկ տեխնիկական սպասարկումը կատարվում է մասնագիտացված կենտրոններում: Այսինքն, բուն գործունեության վայրում յուղի, վառելիքի կամ այլ վտանգավոր հեղուկների պահման տեղամասեր չեն նախատեսվում: Հողային հանույթը՝ մինչ տարածքի բարեկարգման նպատակով օգտագործումը, պահվելու է նախատեսվող գործունեության տարածքում՝ ծածկված բրեզենտե կամ ՊՎԶ թաղանթով:

6. ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

6.1 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և ռելիեֆը

Նախատեսվող գործունեության վայրը՝ Բարձրաշենի միջնակարգ դպրոցը, գտնվում է Արարատյան դաշտավայրից դեպի հյուսիս-արևելք։ Բարձրաշեն համայնքը սահմանակից է՝ հյուսիս-արևմուտքից Նուբարաշեն համայնքին, իսկ հարավ-արևելքից Լանջազատ համայնքին։ Համայնքը գտնվում է ծովի մակերևույթից 1186 մ բարձրության վրա։

ՀՀ Արարատի մարզի տարածքն որոշակիորեն բաժանվում է երկու մասի՝ հարթավայրային և լեռնային։ Հարթավայրային մասը 10-15 կմ լայնության գոտով ձգվում է Հրազդան գետից մինչև ՀՀ պետական սահմանը։ Մարզի տարածքում է գտնվում Խոսրովի պետական արգելոցը (ծովի մակերևույթից 1600 - 2300 մ բարձրության վրա)։ Գեոմորֆոլոգիական տեսանկյունից նախատեսվող գործունեության տարածաշրջանը իրենից ներկայացնում է նախալեռնա-թեքվածքային, թույլ ալիքաձև հարթավայր և հրաբխային սարահարթ, հատված ձորակներով, ոչ խորը կիրճերով, որոնք հանդիսանում են մթնոլորտային տեղումների կոլեկտորներ։ Տարածաշրջանի ռելիեֆը հարթ է, ունի հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք բավական հավասարաչափ թեքվածություն։

Լանդշաֆտային տարբերությունների և շրջանների ձևավորման մեխանիզմների համեմատությունը ցույց է տալիս, որ լանդշաֆտի կառուցվածքում անտրոպոգեն և բնական բաղադրիչները գրավում են առաջնային կամ երկրորդական դիրք։ Լանդշաֆտային գոտին կիսաանապատային գոտին է, անապատային տեղամասերով։ Տիպիկ անապատային լանդշաֆտներ Հայաստանի տարածքում չկան, սակայն դրանց նմանակները, առանձին հատվածներով հանդիպում են տվյալ տարածաշրջանում, հիմնականում գետային նստվածքների ու երրորդական կավերի վրա ծովի մակերևույթից մինչև 900 մ բարձրության վրա և գրավում են փոքր տարածքներ։ Տարածաշրջանի հարթավայրին առավել բնորոշ են կիսաանապատային և աղուտա - մարգագետնային լանդշաֆտները։ Վերջիններս մտնում են բուն կիսաանապատային գոտու մեջ։ Այնտեղ, ուր գրունտային ջրերը մոտ են մակերևույթին, առաջացել են գերխոնավ, այսպես կոչված չալաների հողեր։ Որոշ վայրերում հանդիպում են թաքիրանման հողեր և ավազի բլրակներ։ Մարզի հարավ - արևելքից եզրավորող նախալեռնային և ցածր լեռնային նստվածքային ջրամերժ ապարներ ունեցող տարածքներում՝ շնորհիվ չոր կլիմայի, առաջացել են անապատա - կիսաանապատային լանդշաֆտների հետաքրքիր տիպ՝ Բեղեմներ, որոնք զերծ են բուսական ծածկույթից։ Կիսաանապատային լանդշաֆտը հատուկ է միջին Արաքսի հովտին։ Կիսաանապատի ռելիեֆը ալիքավոր է, թույլ մասնատված, հարթավայրի եզրերում և մանավանդ արևմտյան մասում՝ քարքարոտ։ Տարածաշրջանում հանդիպող յուրաքանչյուր լանդշաֆտային գոտի առանձնանում է իր ուրույն էկոհամակարգերով և դրանցում ներկայացված բուսական և կենդանական աշխարհով։


6.2 Տարածաշրջանի երկրաբանությունը

Տարածաշրջանն ունի բարդ տեկտոնական և երկաբանահիդրոերկրաբանական կառուցվածք։ Երկրաբանական կառուցվածքի ծածկույթը, որը ունի շուրջ 500 մ հաստություն, ներկայացված է չորրորդական հասակի լճագետային նստվածքներով և հրաբխային անդեզիտաբազալտային լավաներով։ Նրանում, հիդրոերկրաբանական տեսակետից, ավազա-կավճա-գլաքարային ապարների

հերթափոխումը՝ մուգ շագանակավուն և կապտականաչավուն երկու ջրամերժ կավերի տարածուն շերտերով, ստեղծում է բարենպաստ պայմաններ ջրատար հորիզոնների համակարգի (համալիրի) ձևավորման համար:

Նախատեսվող գործունեության վայրի արևելյան մասը եզրավորվում է Գեղամա, Երանոսի և Ուրծի լեռնաշղթաներով (տես **Նկար 3**): Արևմուտքում գոգավորությունը հարում է Կարսի սարահարթին: Գոգավորությունը եզրավորող լեռնազանգվածների երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պրոտերոզոյ-քեմբրիի այլափոխված (մետամորֆիզացված) թերթաքարերը, պալեոզոյի (դևոն-պերմ) կարբոնատային ապարները, մեզոզոյի (տրիաս, վերին կավիճ) կավավազաքարային և կրաքարամերգելային գոյացումները, պալեոգենի և ստորին միջին նեոգենի ծովային ֆացիայի նստվածքները, որոնք ինտենսիվ ծալքավորված են և կան տարբեր կազմի և հասակի ինտրուզիվ մարմիններով: Վերոհիշյալ ապարների տարբեր հատվածների վրա խիստ աններդաշնակ, գրեթե հորիզոնական տեղադրված են վերին պլիոցեն-չորրորդական հասակի անդեզիտա-բազալտային կազմի լավաների ծածկոցներն ու հոսքերը, հրաբխային խարամները, մոխիրը, պեմզաները, ինչպես նաև լճագետային և ցամաքային փուխրաբեկորային գոյացումները: Պլիոցեն-չորրորդական գոյացումների համալիրը ծալքավորված չի, տարածված է գոգավորությունը եզրավորող լեռնազանգվածներում (լավաները, նրանց հրաբեկորային տարբերակները) և միջլեռնային գոգավորություններում (լճագետային նստվածքներ): Լավային ապարները ինտենսիվ ճեղքավորված ու ծակոտկեն են, իսկ լճագետային նստվածքները ներկայացված են կտրվածքում հերթափոխվող կավային և ավազազլաքարային շերտերով: Արարատյան միջլեռնային գոգավորության երկրաբանական վերին հարկը ներկայացված է վերոհիշյալ լճագետային նստվածքներով, որոնք պարփակում են գոգավորությունում լճային ռեժիմի ժամանակ Մեծ և Փոքր Արարատների, Արագածի, Արա լեռների հրաբուխներից արտավիժած լավային միջֆորմային հոսքերի ձևով: Վերջինները հանդիսանում են լեռնավանդակի լավային ծածկույթի ստորերկրյա ջրերի գոգավորություն տեղափոխող ուղիներ:

Նկար 3. Նախատեսվող գործունեության վայրի տեղադիրքը ՀՀ լեռնաշղթաների համակարգում



Պայմանական նշաններ

- 18** - Գեղամի լեռնաշղթա (140 կմ), ամենաբարձր կետը՝ Աժդահակ (3597 մ)
- 19** - Երանոսի լեռնաշղթա (40 կմ), ամենաբարձր կետը՝ Յանդասար (2239 մ)
- 20** - Ուրծի լեռնաշղթա (20 կմ), ամենաբարձր կետը՝ Ուրծ (2446 մ)

- - Նախատեսվող գործունեության վայրը
- - լեռնաշղթայի ամենաբարձր կետը

6.3 Տարածաշրջանի հիդրոերկրաբանությունը

Նախատեսվող գործունեության տարածաշրջանի Արարատյան գետահովիտը հանդիսանում է Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերի կուտակման և բեռնաթափման մարզը: Այն գտնվում է Արաքս գետի ավազանի միջին հոսանքում և ձգվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք՝ շուրջ 120 կմ երկարությամբ և 10-30 կմ լայնությամբ: Գտնվում է 800-1000 մ բացարձակ նիշերի սահմաններում, զրավում է շուրջ 1300 կմ² մակերես և իրենից ներկայացնում է ստորերկրյա ջրերի շտեմարան, ուր 42 ջրերը մուտք են գործում դաշտավայրը եզրավորող Արարատի և Արագածի, Գեղամա, Ուրցի ու Հայկական պար լեռնաշղթաներից: Տարածաշրջանում ապարները ներկայացված են հնահրաբխային էֆուզիաներով (բազալտներ, անդեզիտա-բազալտներ, դացիտներ, խարամներ): Գոլորշիացումը գերազանցում է մթնոլորտային տեղումներին:

Արարատյան դաշտը իրենից ներկայացնում է միջլեռնային իջվածք, որը կապված է Արաքս գետի հետ իր ձախափնյա՝ Ախուրյան, Քասախ, Սևջուր (Մեծամոր), Հրազդան, Ազատ, Վեդի վտակներով, որոնց արտաբերման կոներով և լավատակ հնահունքներով էլ տեղի է ունենում դաշտավայրի ստորերկրյա ջրերի սնումը: Գրունտային ջրատար հորիզոնի ապարները ներկայացված են կավավազներով, ավազակավերով և կավերով տարբեր հատիկայնության ավազների և կոպիճների մեծ հզորության ենթաշերտերով և ոսպնյակաձև առաջացումներով: Գրունտային ջրերի սնումը հիմնականում կատարվում է իրենցից ներքև տեղադրված ճնշումային ջրերի ուղղաձիգ բեռնաթափման, ինչպես նաև ոռոգման, ոռոգման ջրանցքներից ջրային կորուստների և գետային ջրերի ինֆիլտրացիայի հաշվին: Բեռնաթափումը կատարվում է գետային ցանցում, կոլեկտորադրենաժային ցանցերում և ծախսվում է գոլորշիացման վրա: Նշված գործոնների ազդեցությամբ և փոխհարաբերությամբ էլ ձևավորվում է գրունտային ջրերի ռեժիմը: Թույլ ճնշումային ջրատար հորիզոնը ներկայացված է ավազա-կոպնագլաբարային նստվածքներով և կավերի փոփոխական հաստության ոսպնյակաձև առաջացումներով: Թույլ ճնշումային ջրերը մեծամասամբ գուրկ են դրական ճնշումից, սակայն ամենուրեք բարձր են կանգնում գրունտային ջրերի մակարդակից: Ուժեղ ճնշումային ջրատար հորիզոնը տեղադրված է կապտականաչավուն կավերի շերտի տակ: Այս ջրատար հորիզոնի ջրերն ունեն դրական պիեզոմետրիական մակերևույթ, որը հարթավայրի եզրամասերից դեպի կենտրոն մեծանում է հասնելով 20 և ավելի մետրի: Նախատեսվող գործունեության վայրը գտնվում է Արարատյան արտեզիան ավազանի գետա-լճային և լավային հոսքերի ճնշումային ջրատար համալիրի մեջ, որտեղ գերակշռում են կավավազային, ավազային, գլախարային, բազալտային և անդեզիտա-բազալտային ապարները:

Բարձրաշեն համայնքի հյուսիսային սահմանով են անցնում Ազատ գետը իր Գողթ վտակով: Ազատ գետը սկիզբ է առնում Գեղամա լեռնաշղթայի Սպիտակասար լեռնագագաթի հարավարևմտյան լանջերի 3000-3200 մ բարձրություններից: Սնումը հիմնականում ստորերկրյա է (69%) և ձնահալոցքային (21%): Ջրի մակարդակի ամենամյա կրկնվող բարձրացումը տեղի է ունենում ապրիլից հունիս, որի ընթացքում ձևավորվում է տարեկան հոսքի 46%-ը: Ազատ գետի ջրերը մասամբ օգտագործվում են գյուղատնտեսական և էներգետիկ նպատակներով:


6.4 Սեյսմատեկտոնական պայմանները

Նախատեսվող գործունեության վայրի սեյսմիկ և սելավային ռիսկերի քարտեզը ներկայացված է ստորև **Նկար 4**-ում: ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզի համաձայն՝


նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է 2-րդ կարգի հավանական սեյսմիկ վտանգի գոտում, իսկ ՀՀ սելավավտանգ գոտիների քարտեզի համաձայն՝ նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է երկրորդ կարգի վտանգավորության սելավային գոտում:

Նկար 4. Նախատեսվող գործունեության վայրի սեյսմիկ և սելավային ռիսկերը¹

Ա. ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզ²



Բ. ՀՀ սելավավտանգ գոտիների քարտեզ³



6.5 Տարածաշրջանի հողերի նկարագիրը

Արարատյան հարթավայրում առավել ցածրադիր տեղերում ձևավորվել են հումուսով աղքատ գորշ հողեր՝ բաց գորշագույն հողեր ու տիպիկ գորշահողեր՝ աղակալած տարածքներով: Անապատի համար բնորոշ այս հողերի առաջացմանը նպաստել են կլիմայի չորությունը և բուսական ծածկույթի աղքատությունը: Նախատեսվող գործունեության տարածքի հողերը պատկանում են մուգ շագանակագույն հողերի տիպին:

Մուգ շագանակագույն հողերը մակերեսից ունենում են մուգ, երբեմն գորշավուն երանգավորում: Կուլտուրականացված շագանակագույն հողերը ձևավորվում են նախալեռնային հարթությունների վրա, տարբերվում են համեմատաբար հզոր հումուսային հորիզոնով (50-70 սմ) թույլ դիֆերենցված համասեռ պրոֆիլի կառուցվածքով: Հին ոռոգելի հողատեսքերը հիմնականում լվացված են և առանձնանում են որոշակի խտացվածությամբ: Այս հողերը բնութագրվում են խայտաբղետ մեխանիկական կազմով, որը պայմանավորված է ռելիեֆի լիտոլոգիական պայմաններով, ինչպես նաև ներհողային հողմնահարման և ոռոգման ազդեցություններով: Հողերի ձևավորման համար հիմք են

¹Հայաստանի ջրային ռեսուրսների ատլաս, Երևան-2008


²ՀՀՇՆ 20.04 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմեր

³«Աղետների ռիսկերի կառավարումը տեղական մակարդակում» ձեռնարկ, ՄԱՉԾ-ի և ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա, 2011

հանդիսացել կարծր ապարների հողմնահարման նյութերը, որոնք առանձնանում են ապարների բեկորային բարձր պարունակությամբ:

Ստորև **Նկար 5**-ում ներկայացված է նախատեսվող գործունեության վայրի (բարձրությունը ծովի մակարդակից 1186 մ) հողային կատեգորիան, համաձայն որի նախատեսվող գործունեության տարածաշրջանի հողերը պատկանում են անցյալում ոռոգված ջրաբեր մարգագետնային հողերի կատեգորիային:

Նկար 5. Նախատեսվող գործունեության վայրի հողային ծածկույթը



6.6 Կլիմայի և օդերևութաբանական պայմանները

ՀՀԾՆ II-7.01-2011 "Շինարարական կլիմայաբանություն" շինարարական նորմերում նախատեսվող գործունեության վայրի օդերևութաբանական պայմանների բացակայության պատճառով տարածաշրջանի կլիմայական պայմանների նկարագրման համար օգտագործվել է ՀՀԾՆ II-7.01-2011 "Շինարարական կլիմայաբանություն" շինարարական նորմերում ներկայացված "Երևանի Էրեբունի" օդերևութաբանական կայանի տվյալները՝ քանի որ նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի հարևանությամբ:

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման անապատային-կիսաանապատային է, ավելի բարձրում՝ չոր տափաստանային: Շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Տարածաշրջանը ցամաքային կլիմային բնորոշ հատկանիշների շնորհիվ պարզ արտահայտվում են տարվա բոլոր չորս եղանակները: Ձմեռները ցուրտ են, երբեմն՝ ձնառատ: Ամառը հիմնականում շոգ է, չորային: Տեղումների հիմնական մասը թափվում է զարնանը, մասամբ՝ աշնանը: Տեղումների սակավությանը զուգահեռ՝ շատ են արևային ժամերը, երկինքը պարզ է հիմնականում:

ամբողջ տարվա ընթացքում: Մառախուլապատ կամ ամպամած եղանակը, հատկապես մայիս-սեպտեմբեր ամիսներին, հազվադեպ երևույթ է:

6.6.1 Ջերմաստիճանը

Տարածաշրջանում օդի բացարձակ նվազագույնը աստիճանը -28°C է: Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է 42°C , ամենատաք ամսվա միջին առավելագույնը՝ 25.8°C : Ըստ ՀՀՇՆ II-7.01-2011 "Շինարարական կլիմայաբանություն" շինարարական նորմերի, տարածաշրջանում օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանները բերված են ստորև Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը, $^{\circ}\text{C}$

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, $^{\circ}\text{C}$											Միջին տարեկան, $^{\circ}\text{C}$	Բացարձակ նվազագույն, $^{\circ}\text{C}$	Բացարձակ առավելագույն, $^{\circ}\text{C}$
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		
Երևան "Էրեբունի"	888	-3.6	-1	5.3	12.5	17.4	21.8	25.8	25.2	20.5	13.3	6.3	-0.2	11.9	42

6.6.2 Խոնավությունը

Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 61%: Ամենացուրտ ամսվա օդի միջին հարաբերական խոնավությունը կազմում է 67%, իսկ ամենաշոգ ամսվանը՝ 28%: Ըստ ՀՀՇՆ II-7.01-2011 "Շինարարական կլիմայաբանություն" շինարարական նորմերի, տարածաշրջանում օդի հարաբերական խոնավության տվյալները բերված են ստորև Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Օդի հարաբերական խոնավության տվյալները

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %													
	ըստ ամիսների											Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր		ամենացուրտ ամսվա, %	ամենաշոգ ամսվա, %
Երևան "Էրեբունի"	79	75	62	56	57	49	45	46	49	62	73	61	67	28

6.6.3 Մթնոլորտային տեղումները

Միջին տարեկան տեղումների քանակը կազմում է 291 մմ: Առավելագույնը դիտվում է մայիս ամսին՝ 45 մմ, նվազագույնը օգոստոս ամսին՝ 8 մմ: Ըստ ՀՀՇՆ II-7.01-2011 "Շինարարական կլիմայաբանություն" շինարարական նորմերի, տարածաշրջանում մթնոլորտային տեղումների վերաբերյալ տվյալները բերված են ստորև Աղյուսակ 4-ում:


Աղյուսակ 4. Մթնոլորտային տեղումները, %

Բնակավայրի, օրեր/տարածվածություն/անվանում	Տեղումների քանակը $\frac{\text{միջին ամսական օրական առավելագույն}}{\text{, մմ}}$													Զնադածկույթ		
	ըստ ամիսների												Տարեկան	Առավելագույն տառապնական բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթի օրերի քանակը	Զյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
Երևան "Էրեբունի"	24	23	32	35	45	23	11	8	12	29	28	21	291	58	47	
	24	23	34	29	42	34	29	37	51	35	26	28	51			


6.6.4 Քամի

Դիտարկվող տարածքում քամու միջին արագությունների բաշխվածությունը տարվա տարբեր ժամանակաշրջաններում բերված է ստորև **Նկար 6**-ում: Քամու միջին արագության ամենամեծ արժեքը գրանցված է հուլիս ամսին հյուսիս-արևելյան ուղղությամբ՝ 5.7 մ/վ արագությամբ: Տարվա տարբեր ժամանակաշրջաններում քամու միջին ամսական արագության ամենամեծ արժեքը ստացվում է հուլիս ամսին և կազմում է 2.8 մ/վ, իսկ միջին տարեկան արագությունը հավասար է 1.5 մ/վ: Ուժեղ քամիներով օրերի քանակը (≥ 15 մ/վ) 29-ն է: Քամու ուղղությունների կրկնելիության պատկերները բերված են ստորև **Նկար 7**-ում: Ամենամեծ կրկնելիությունը դիտվում է հուլիս ամսին հյուսիս-արևելյան ուղղությամբ և կազմում է 28%:

Նկար 6. Քամու միջին արագությունների բաշխվածությունը



Նկար 7. Քանու ուղղությունների կրկնելիությունը



6.7 Տարածաշրջանի հատուկ պահպանվող տարածքները

Նախատեսվող գործունեության տարածաշրջանին ամենամոտ գտնվող հատուկ պահպանվող տարածքներն են՝ "Խոսրովի անտառ" պետական արգելոցը, որը նախատեսվող գործունեության վայրից գտնվում է 5.7 կմ հեռավորության վրա և "Էրեբունի" պետական արգելոցը, որը նախատեսվող գործունեության վայրից գտնվում է 9 կմ հեռավորության վրա (տես Նկար 8):

"Խոսրովի անտառ" պետական արգելոց


"Խոսրովի անտառ" պետական արգելոցը հիմնադրվել է 1958 թվականին: Արգելոցը գտնվում է Արարատի մարզում Արարատյան դաշտի հարևանությամբ՝ Գեղամա լեռնաշղթայի լեռնաբազուկների, Երանոսի և Երախի լեռների վրա: Այն զբաղեցնում է 23213.5 հա տարածք, տեղակայված է ծովի մակարդակից 700-ից մինչև 2800 մ բարձրության վրա:

"Էրեբունի" պետական արգելոց

"Էրեբունի" պետական արգելոց գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում, Երևանից 8 կմ հարավ-արևելք: Կազմավորվել է 1981 թ.-ին՝ Էրեբունի վարչական շրջանի տարածքում, կիսաանապատային և լեռնատափաստանային գոտիների անցումային հատվածում՝ ծովի մակերևույթից 1300-1450 մ բարձրություններում՝ դաշտավունկազգիների վայրի ազգակիցների

(մասնավորապես վայրի ցորենների աշխարհում եզակի գենոֆոնդի) պահպանության նպատակով: Այժմ արգելավայրը զբաղեցնում է 118.7 հա տարածք:

Նկար 8. Նախատեսվող գործունեության վայրի և մոտակա հատուկ պահպանվող տարածքների հեռավորությունը



6.8 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի բուսական աշխարհը

Արարատի մարզը համարվում է ՀՀ-ում տնտեսապես ամենազարգացած մարզերից մեկը: Առավելապես կարևորվում է մարզի գյուղատնտեսական նշանակությունը: Ունենալով Արարատյան դաշտի մի մեծ հատված՝ այստեղ է մշակվում ՀՀ գյուղատնտեսական մշակաբույսերի զգալի մասը: Մարզում զարգացած է երկրագործությունը: Հիմնական պտղատու այգիներն են խաղողի, ծիրանի, դեղձի այգիները, մշակվում են նաև կեռաս, սալոր, խնձոր, տանձ և այլն: Մարզի հիմնական մշակաբույսերն են ձմերուկը, սեխը, լոլիկը, վարունգը, լոբին, սիսեռը, կանաչ պղպեղը, սմբուկը և ցորենազգիների դասին պատկանող բույսերը:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում գերակշռում են անապատային հողերը: Ավելի տարածված են հալոֆիլ և գիպսոֆիլ անապատները: Անապատի բուսականությունը աղքատ է: Աճում են չորասեր, աղասեր բուսատեսակներ, խոնավ վայրերում եղեգն: Նախալեռնային կիսաանապատային գոտու գորշահողերի վրա աճում են ֆրիգանոֆային չորասեր բույսեր, էֆեմերներ, հոտավետ օշինդրը և այլն:

Հալոֆիլ անապատներին բնորոշ բույսերն են՝ սոլերոս (*Salicornia europaea*), կալիդիում (*Kalidium caspicum*), աղահասկ (*Halostachys caspica*), բորակաբույս (*Nitraria schoberi*): Հալոֆիլ համակեցությունների հետ է կապված էնդեմիկ տեսակ՝ արարատյան որդան կարմիրի (*Porphyrophora*

hammelii) գոյությունը, որը զարգանում է հիմնականում որդանախոտի (*Aeluropus littoralis*) արմատների վրա:

Գիպտոֆիլ անապատները բնորոշ են արաքսյան հարթավայրը շրջապատող լեռնաշղթային (Երանոս, Երախ, Ուրց): Գիպտոֆիլ անապատներին բնորոշ բույսեր են՝ սապնարմատ (*Gypsophila*) ցեղի ներկայացուցիչները, հալանտիումը (*Halanthium rarifolium*), մոլոկան Թախթաշյանի (*Lactuca takhtadzhianii*), զուգատերև (*Zygophyllum atriplicoides*) և այլն: Տարածաշրջանում հանդիպում են նաև՝ գեղածնկիկ մատիտեղանման (*Calligonum polygonoides*), հազարատերևուկ նեղատերև (*Achillea tenuifolia*), եղջերախոտ, եղնաբղեղ ավազուտային (*Ceratocarpus arenarius*), զեյդլիցիա ծաղկավոր (*Seidlitzia florida*): Աճում են նաև այլ չոր բույսեր՝ տերեփուկ, երիցուկ, իշակաթնուկ:

Նախատեսվող գործունեության տարածքում հանդիպող ՀՀ կարմիր գրքում և ԲԳՄՄ Կարմիր ցուցակում գրանցված բուսատեսակները⁵ ներկայացված են ստորև Աղյուսակ 5-ում, իսկ դրանց լուսանկարները բերված են Նկար 9-ում:

Աղյուսակ 5. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ, անհետացող բուսատեսակները

№	Բուսատեսակներ		ԲԳՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ⁶
	Հայերեն	Լատիներեն	
1	Շովիցիա գեղապտուղ	<i>Szovitsia callicarpa</i> Fisch. & C.A.Mey.	EN
2	Իշակաթնուկ հալեպական	<i>Euphorbia aleppica</i> L.	CR
3	Տերեփուկ երևանյան	<i>Centaurea erivanensis</i> (Lipsky) Bordz.	VU
4	Եղիսպակ կիսաթփային	<i>Salvia suffruticosa</i> Moentbr. & Auch. ex Benth.	EN

Նկար 9. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող բուսատեսակների լուսանկարները



⁵ Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրք,

⁶ EN (*Endangered*) - վտանգված տեսակ,

VU (*Vulnerable*) - խոցելի տեսակ,

CR (*Critically Endangered*) - կրիտիկական վիճակում գտնվող տեսակ:

Եղիսպակ կիսաթփային - *Salvia suffruticosa* Moentbr. & Auch. ex Benth.



Եղնաբղետ սալագուտային - *Ceratocarpus arenarius*

Բշակաթնուկ հալեպական - *Euphorbia aleppica* L.



Սղեղոս - *Salicornia europaea*



Բորակաբույս - *Nitraria schoberi*



Մոլոկան Թախթաշյանի - *Lactuca takhtadzhianii*

6.9 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի կենդանական աշխարհը

Նախատեսվող գործունեության տարածաշրջանի կիսանապատային ցամաքային էկոհամակարգի կենդանական աշխարհը բազմազան է: Հայաստանի կիսանապատային ցամաքային էկոհամակարգերում գրանցված է ողնաշարավոր կենդանիների 101 տեսակ (երկկենցաղների՝ 4, սողունների՝ 30, թռչունների՝ 23, կաթնասունների 44) և անողնաշար կենդանիների 1687 (այդ թվում՝ փափկամարմինների 59, սարդակերպերի 97, միջատների 1531): Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպում են անողնաշարավոր կենդանիներից 51, իսկ ողնաշարավորներից 92 տեսակ: Կիսանապատներում հանդիպում են բազմաթիվ էնդեմիկ անողնաշար տեսակներ, ներառյալ միջերկրածովային, իրանական, կովկասյան և դրիմյան ծագում ունեցողները: Աղուտային հալոֆիլ համակեցությունների հետ է կապված էնդեմիկ տեսակի՝ Արարատյան որդանի (*Porphirophora hamelii*) գոյությունը:

Տարածաշրջանում ողնաշարավոր կենդանիներից հանդիպում են հետևյալ ներկայացուցիչները՝ գորշուկը, նապաստակը, ճահճակուղը, ժայռային մողեսը, լորտու սովորականը, դաշտամուկը, քարակզաքիսը և այլն: Անողնաշարավորներից հանդիպում են՝ անձրևավորողը, մրջյունը, ծղրիղը, ճիլը, մորեխը և այլն: Սողուններից հանդիպում են գյուրգա, հայկական իծ, լորտուներ, Արևմտյան վիշապիկը (*Eryx jaculus*) և այլն:

Թռչուններից հանդիպում են տնային ճնճուկը (*Passer domesticus*), մոխրագույն ագռավը (*Corvus corone*), անտառային արտույտը (*Lullula arborea*), գյուղական ծիծեռնակը (*Hirundo rustica*), եղինջաթռչնակը (*Troglodytes troglodytes*), ժայռային ծիծեռնակը (*Ptyonoprogne rupestris*):

Գետերի իխտիոֆաունան ներկայացնում են բրամը (*Abramis brama*), ծածանը (*Cyprinus carpio*), սովորական լոբոն (*Silurus glanis*) և այլն:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ կարմիր գրքում և ԲԳՄՄ Կարմիր ցուցակում գրանցված կենդանատեսակների⁷ ցուցակը բերված է ստորև **Աղյուսակ 6**-ում, իսկ դրանց որոշների լուսանկարները՝ **Նկար 10**-ում:

Աղյուսակ 6. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ, անհետացող կենդանատեսակները

№	Կենդանատեսակ		ԲԳՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ⁸
	Հայերեն	Լատիներեն	
1	Տոնական գնայուկ	Poecilus festivus	VU
2	Բոգաչևի սևամարմին	Ectromopsis bogatchevi	CR
3	Նեղ սևամարմին	Laena constricta Khnzorian	EN
4	Ռիխտերի փղիկ	Cyclobaris richteri Ter-Minasian	CR
5	Չարմանահրաշ փղիկ	Baris mirifica Khnzorian	CR
6	Գառնանգղ	Gypaetus barbatus Linnaeus	VU
7	Գիշանգղ	Neophron percnopterus Linnaeus	EN
8	Սպիտակագլուխ անգղ	Gyps fulvus	VU
9	Սև անգղ	Aegipus monachus	EN
10	Օձակեր արծիվ	Circaetus gallicus	VU
11	Եվրոպական ճնճաճուռակ	Accipiter bre	VU
12	Տափաստանային արծիվ	Aquila nipalensis orientalis Hodgson	VU
13	Ներկարար	Coracias garrulus	VU
14	Կարմրակատար շամփրուկ	Lanius senator	VU
15	Սպիտակափող սոխակ	Irania gutturalis	DD
16	Մեծ ժայռային սիտեղ	Sitta tephronota obscura Sharpe	VU
17	Ժայռային դրախտապան	Emberiza buchanani Blyth	VU
18	Լայնականջ ոզնի	Erinaceus (Hemiechinus) auritus Gmelin	EN
19	Փոքր ճագարամուկ	Allactaga elater Lichtenstein	EN

⁷ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրք

⁸ EN (*Endangered*) - վտանգված տեսակ,

VU (*Vulnerable*) - խոցելի տեսակ,

DD (*Data Deficient*) - տվյալների անբավարարություն և այլն

NT (*Near Threatened*) - *Վտանգված* տեսակին մոտ գտնվող

Նկար 10. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող` ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ, անհետացող կենդանատեսակներից որոշների լուսանկարները



Սև անգղ - *Aegipus monachus*



Ժայռային դրախտապան - *Emberiza buchanani* Blyth



Կարմրակապտաշունչիկ - *Lanius senator*



Գառնանգղ - *Gypaetus barbatus* Linnaeus



Սպիտակապիտղ տխասկ - *Irania gutturalis*



Ներկարար - *Coracias garrulus*



Տոնակա զնայուկ - *Poecilus festus*



Փոքր ճագարամուկ - *Allactaga elater* Lichtenstein

6.10 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի համայնքների նկարագիրը և սոցիալ տնտեսական վիճակը

Նախատեսվող գործունեության տարածքը՝ Բարձրաշենի միջնակարգ դպրոցը, գտնվում է ՀՀ Արարատի մարզի Բարձրաշեն համայնքում, Մաշտոցի 113 փ հասցեում:

Բարձրաշեն

Մակերեսը՝ 1602.5 հա,

Բնակչությունը՝ 1738 մարդ,

Հեռավորությունը մարզկենտրոն Արտաշատից (կենտրոնից)՝ 15 կմ,

Հեռավորությունը մայրաքաղաք Երևանից (կենտրոնից)՝ 14 կմ:

Բարձրաշեն համայնքը սահմանակից է՝ հյուսիս-արևմուտքից Նուբարաշեն համայնքին, իսկ հարավ-արևելքից Լանջազատ համայնքին: Բարձրաշեն համայնքը գտնվում է ծովի մակերևույթից 1186մ բարձրության վրա: Բարձրաշեն համայնքը մինչև 1940թ. կոչվել է Բիթլիջա, որը գտնվում է այժմյան Բարձրաշենից 3 կմ դեպի հյուսիս-արևելք: 1940թ. համայնքի 76 ընտանիք վերաբնակություն են հաստատել այժմյան Բարձրաշեն համայնքում: Սկզբում համայնքի բնակիչները զբաղվել են անասնապահությամբ և հացահատիկային կուլտուրաների մշակմամբ: Համայնքը սկսել է զարգանալ և ընդարձակվել 1960-ական թվականներից: 1969թ. համայնքում արդեն գործում էր Բարձրաշենի թոշնաբուժական ֆաբրիկան:

Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն

Բարձրաշեն համայնքը չունի գլխավոր հատակագիծ և գոտիավորման նախագիծ: Քաղաքաշինական ծրագրային այ լիաստաթղթերից առկա է քաղաքաշինական կադաստրի վարման մատյանը, քաղաքաշինական կանոնադրություն և այլն:

Բարձրաշեն համայնքում կանոնավոր կերպով իրականացվում է աղբահանությունը, շաբաթը մեկ անգամ, սակայն համայնքի տարածքում աղբամանների բացակայությունը բացասաբար է անդրադառնում համայնքի արտաքին տեսքի և սանիտարահիգիենիկ պայմանների վրա: Համայնքը չունի աղբատար մեքենա: Բարձրաշեն համայնքում գրեթե բոլոր փողոցները ապահովված են ցերեկային լուսավորությամբ: Գերեզմանատները ցանկապատված չեն, 2016 թվականին գերեզմանատուն

տանող ճանապարհը խճապատվել է: Համայնքը գազաֆիկացված է: Համայնքի խմելու ջուրը մատակարարվում է Գառնիից և սպասարկվում է "Վեդիա Ջուր" ընկերության կողմից: Համայնքում գործում է շուրջօրյա ջրամատակարարում:

Զբաղվածություն

Համայնքի վարչական տարածքի բնակչության ընդհանուր թվաքանակից զբաղվածներ՝ 500 մարդ, այդ թվում՝ ոչ գյուղատնտեսական աշխատանքով զբաղվածներ՝ 235 մարդ, գյուղատնտեսական աշխատանքներում զբաղվածներ՝ 265 մարդ, 295 մարդ մեկնում է արտագնա աշխատանքների: Համայնքի բնակիչները զբաղվում են այգեգործությամբ, խաղողագործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ: Մշակում են ջերմասեր բանջարաբուստանային կուլտուրաներ՝ լոլիկ, տաքդեղ, սմբուկ, ձմերուկ, սեխ, ինչպես նաև հացահատիկ:

Բնակիչների հիմնական եկամուտը ստացվում է սեփականաշնորհված վարելահողերի և տնամերձ հողամասերի մշակումից, թռչակների և նպաստների ստացումից: Այս հիմնախնդիրների հաղթահարման հիմնական ճանապարհը աշխատատեղերի ստեղծումն է:

Հողօգտագործում

Համայնքի վարչական տարածքը կազմում է 1602.5 հա այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության վարելահողեր՝ 271.75 հա, բնակելի շինությունների տակ հողեր՝ 77.77 հա, անօգտագործելի հողեր 948.0 հա, արտադրական հողեր՝ 12.00 հա, գերեզմանոց՝ 2 հա, հուշարձաններ՝ 1.7 հա, գյուղամիջյան փողոցներ՝ 14.4 հա, սեփականաշնորհված հողեր՝ 191.86 հա և այլն:

1991 թվականին հանրապետությունում իրականացված հողի սեփականաշնորհման ժամանակ համայնքի բնակավայրերում սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը կազմել է՝ 0.07 հա ջրովի և 0.25 հա անջրդի:

Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն

Համայնքը կենտրոնին կապող միջհամայնքային ճանապարհները հիմնականում ասֆալտապատ են: Ներհամայնքային ճանապարհների մոտ 30 %-ը բարեկարգ են, խճապատված են, իսկ մնացած ճանապարհները կարիք ունեն նորոգման: Համայնքում տեղադրված չեն ճանապարհային երթևեկության նշաններ: Համայնքից Արտաշատ շաբաթը 2 անգամ գործում է երթուղային ավտոբուս, իսկ համայնքից մայրաքաղաք օրական 4 անգամ գործում է երթուղային տաքսի:

Կրթություն և առողջապահություն

Համայնքը ունի մեկ միջնակարգ դպրոց՝ Բարձրաշենի միջնակարգ դպրոցը, որի շենքային պայմանները գտնվում են անմխիթար վիճակում: Դպրոցի շենքը ունի կապիտալ վերանորոգման կարիք: Դպրոցն ունի 172 աշակերտներ և 23 ուսուցիչ: Համայնքի մտուր մանկապարտեզի մի մասը ենթարկվել է կապիտալ վերանորոգման բարերարի և որոշ մասն էլ համայնքապետարանի կողմից: Համայնքը ունի բուժտեղամաս, իր շենքային և գույքային հարմարություններով, որի ներսում գործում է նաև ատամնաբուժարան:

Մշակույթ, սպորտ, հոգևոր դաստիարակություն

Համայնքի կուլտուրայի տունը ունի վերանորոգված երկու խաղասենյակներ, որտեղ երիտասարդները անցկացնում են իրենց ազատ ժամանակը: Կուլտուրայի տունը կապիտալ վերանորոգման կարիք ունի:

Միջոցառումները կատարվում են դպրոցում կամ համայնքապետարանում: Համայնքը ունի ֆուտբոլի հրապարակ և իր ֆուտբոլի թիմը, ովքեր երբեմն մեկնում են մրցումների: Վերջինիս հարցով նորմալ հիմքերի վրա է դրված երիտասարդների հետ տարվող աշխատանքները: Համայնքի գրադարանի գրքերը՝ վերանորոգմա նպատճառով, ժամանակավորապես՝ 5150 միավորի պահ է տրվել համայնքի դպրոցին:

Նախատեսվող գործունեության վայրի և մոտակա բնակավայրերի տեղադիրքը, ինչպես նաև դրանց միջև ընկած հեռավորությունները, պատկերված են ստորև **Նկար 11**-ում:

Նկար 11. Նախատեսվող գործունեության վայրի և մոտակա բնակավայրերի տեղադիրքը



6.11 Պատմամշակութային և բնության հուշարձանները

ՀՀ Կառավարության 2002թ. հունվարի 24-ին թիվ 65-Ն որոշմամբ հաստատված՝ Արարատի մարզի հուշարձանների պետական ցուցակի համաձայն, Բարձրաշեն համայնքի տարածքում կան թվով 3 հուշարձան (1 միավոր), որոնք ներկայացված են ստորև **Աղյուսակ 7**-ում:

Աղյուսակ 7. Բարձրաշեն համայնքի պատմամշակութային հուշարձանները

Հուշարձանի անվանումը	Կառուցման տարեթիվը	Հասցեն	Նշանակությունը՝ հանրապետական/ տեղական	Հավելյալ նշումներ
Գյուղատեղի "Բարձրաշեն"	18-20 դդ.	7 կմ հյուսիս-արևմուտք	S	Գառնի-Արտաշատ հանդամիջյան ճանապարհին, լքված՝ 1930-ական թթ.
Գերեզմանոց	14-20 դդ.		S	Տարածքում կան մի քանի խաչքարերի բեկորներ (14-15 դդ.):
Մատուռ Թուխ Մանուկ	14-15 դդ.		S	վրկռ.՝ 18-20 դդ.

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ին թիվ 967-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ բնության հուշարձանների ցանկի համաձայն նախատեսվող գործունեության վայրի մոտ գտնվող բնության հուշարձաններ չկան:

6.12 Չգայուն կլանիչներ

Նախատեսվող գործունեության վայրին ամենամոտ գտնվող զգայուն կլանիչներից են՝ բնակելի տները՝ դեպի հյուսիս և գյուղամիջյան գլխավոր ավտոճանապարհը՝ անմիջապես դպրոցի հարավային հատվածում: Ամենամոտ բնակելի տունը նախատեսվող գործունեության վայրից գտնվում է մոտ 80 մ հեռավորության վրա: Դպրոցի հարավային հատվածին հարևանող գլխավոր գյուղամիջյան ավտոճանապարհի հեռավորությունը դպրոցից մոտ 10 մ է: Նախատեսվող գործունեության վայրի իրադրային հատակագիծը ներկայացված է **Հավելված 2**:

7. ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

